

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
2017-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
Ռ Ա Ջ Մ Ա Վ Ա Ր ՈՒ Թ Յ Ա Ն**

2019 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումների ցանկ3

Ներածություն.....4

Գերակայություններ, նպատակներ

1. Աղքատության գնահատումը մարզում.....5

2. Արդյունաբերություն, ՓՄՁ, Մասնավոր հատված, Տեղեկատվական կենտրոն 6

2.1 Արդյունաբերություն եւ մասնավոր հատված զարգացում7

2.2 Փոքր եւ միջին ձեռներեցություն-----7

2.3 Տեղեկատվական Տեխնոլոգիաներ8

2.4 Զբոսաշրջություն8

3. Գյուղատնտեսություն -----10

4. Բնապահպանություն.....13

5. Սոցիալական ոլորտներ15

5.1 Կրթություն.....15

5.2 Մշակույթ, սպորտ եւ երիտասարդության հարցեր.....17

5.3 Առողջապահություն17

4.4 Սոցիալական պաշտպանություն.....18

6. Ենթակառուցվածքներ19

6.1 Տրանսպորտ եւ ճանապարհաշինություն19

6.2 Ջրամատակարարում եւ ջրահեռացում21

6.3 Գազամատակարարում (գազիֆիկացում)22

6.4 Էներգետիկա22

7. Քաղաքաշինություն23

8. Տարածքային կառավարում24

8.2 Տեղական ինքնակառավարում26

8.3 Քաղհասարակություն.....27

8.4 Արտակարգ իրավիճակներ, բնակչության եւ տարածքների պաշտպանություն27

9. Մշտադիտարկում29

10. Ֆինանսավորում29

ՀԱՎԵԼՎԱԾ 1 – ՀՀ Լոռու մարզի 2019թ.-ի գործունեության ծրագրի տրամաբանական հենք

ՀԱՎԵԼՎԱԾ 2 - ՀՀ Լոռու մարզի 2019թ.-ի գործունեության ծրագրով նախատեսված ֆինանսավորումն ըստ միջոցառումների

ՀԱՎԵԼՎԱԾ 3 - ՀՀ Լոռու մարզի 2019թ.-ի գործունեության ծրագրով նախատեսված ֆինանսավորումն ըստ աղբյուրների

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՁՌ	Հայաստանի զարգացման ռազմավարություն
ՀՏՁՌ	Հայաստանի տարածքային զարգացման ռազմավարություն
ՀՏՁՀ	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
ԵՄ	Եվրոպական Միություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՏԿՁՆ	Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՄԳ	Մոնիտորինգ և գնահատում
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՏՁ	Տարածքային զարգացում
ՏՁՌ	Տարածքային զարգացման ռազմավարություն
ՄՁՌ	Մարզի զարգացման ռազմավարություն
ՖՀ ՊԱԿԱ	Ֆրանսիայի Հանրապետության Պրովանս Ալպեր Լազուրի Ափ Ռեգիոն
ՓՄՁ ԶԱԿ	Փոքր եւ միջին ձեռներեցության զարգացման ազգային կենտրոն
ԳԾ	Գործունեության ծրագիր

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Լոռու մարզի 2019 թվականի գործունեության ծրագիրը մշակվել է ՀՀ կառավարության 2017թ. հուլիսի 6-ի նիստի թիվ 29 արձանագրային որոշմամբ հաստատված ՀՀ Լոռու մարզի 2017-2025թթ. զարգացման ուղղակարության (ՄՁՌ) հիման վրա: Գործունեության ծրագրում ներառվել են ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 7-ին կայացած նիստի N 29.7/[431977]-17 N51 արձանագրությամբ տրված հանձնարարականի ցուցանիշներն ու ուղղությունները, ինչպես նաև հաշվի են առնվել ՀՀ ՏԿԶ նախարարության կողմից մշակված «ՀՀ մարզպետների կողմից կատարված աշխատանքների գնահատման չափորոշիչները»:

2019թ.-ի գործունեության ծրագիրը նպաստելու է ՄՁՌ-ով սահմանված նպատակների եւ գերակայությունների իրականացմանը: Տարեկան ծրագրում ներառված են 2019 թվականի ՀՀ պետական բյուջեի, համայնքային բյուջեի, մասնավոր ներդրումներով, դոնորներով, միջազգային և այլ կազմակերպությունների կողմից Լոռու մարզում ընթացիկ տարում նախատեսվող ներդրումային ծրագրերը: Ոլորտների «տրամաբանական հենք»-ով նախանշված են հիմնական ծրագրային միջոցառումները, որոնց մշտադիտարկման աշխատանքները կիրականացվեն ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից:

ՄՁՌ-ով սահմանվել է մարզի զարգացման տեսլականը, այն է՝ ունենալ բազմաճյուղ, զարգացած արդյունաբերություն, արդիականացված գյուղատնտեսություն և զարգացած զբոսաշրջություն, ՏՏ ոլորտ:

2019թ.-ի գործունեության ծրագրի հիմքում ընկած է ՄՁՌ-ի նպատակները՝

- 1) մարզի տնտեսական աճի ապահովում
- 2) մարզի երեք տարածաշրջանների համաչափ զարգացման ապահովում
- 3) տարածքային և տեղական զարգացման կառավարման կարողությունների և համակարգերի զարգացում

ՄՁՌ հիմնական գերակայություններն են

- 1) արտահանմանը միտված արդյունաբերության զարգացում
- 2) ինտենսիվ գյուղատնտեսության զարգացում
- 3) մշակութային, գյուղական տուրիզմի զարգացում

Լոռու ՄՁՌ-ի 2019թ.-ի գործունեության ծրագրի իրագործման արդյունքում ակնկալվում է ստանալ հետևյալ հիմնական արդյունքները՝

- ✓ Մարզի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի աճ
- ✓ Ոչ գյուղատնտեսական ֆորմալ զբաղվածների թվի աճ
- ✓ Ակտիվ կազմակերպությունների թվի ավելացում
- ✓ Գործազրկության մակարդակի նվազեցում
- ✓ Աղքատության մակարդակի նվազեցում
- ✓ Նորագույն տեխնոլոգիաների ոլորտի մասնագետների ավելացում
- ✓ Մարզային վարչակազմերի բարձրագույն կրթությամբ աշխատակիցների աճ

ՀՀ Լոռու մարզի 2019 թվականի գործունեության ծրագիր

- ✓ Մարզային և համայնքային աշխատողների վերապատրաստման ծրագրերի իրականացում՝ նվիրված մարզային/տեղական զարգացմանը

Սույն փաստաթղթի կազմման հիմնական նպատակներն են՝

- նկարագրել ՄՁՌ-ի գերակայություններին եւ նպատակներին հասնելու 2019թ.-ին իրականացվելիք միջոցառումները
- ներառել միջոցառումների իրականացման ցուցանիշները և արդյունքները տրամաբանական հենքում
- համադրել իրականացվելիք միջոցառումներն ըստ ոլորտների եւ ֆինանսական աղբյուրների.

1. ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՄԱՐԶՈՒՄ

Լոռու մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարությունում բավարար կերպով գնահատված է աղքատության մակարդակը մարզում, այն կազմում է.

Տարեթիվ/մակարդակ	Աղքատության	Ծայրահեղ աղքատության	Գործազրկություն
2016թ.	35.8%,	2.7%	12.3
2017թ.	29.7%	2.1%	12.8
2018թ. կանխատեսում	29.1%	2.0%	12.8
2019թ. կանխատեսում	28.5%	1.9%	12.3

Տնտեսության մեջ ներդրումների ներգրավմամբ ստեղծել նոր աշխատատեղեր, իջեցնելու աղքատության մակարդակը, որը 2019թ.-ին կանխատեսվում է կրճատել 0.6%-ով:

Մարզում աղքատությունը եւ գործազրկության ցածր մակարդակը պայմանավորող հիմնական գործոնները մարզի սոցիալ-տնտեսական զարգացման խոչընդոտներն են, որոնց հիման վրա նախանշվել են աղքատության հաղթահարման ռազմավարությունն ու համապատասխան միջոցառումները:

2. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՓՄՁ, ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾ, ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

Արդյունաբերության, Փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մասնավոր հատվածի զարգացումը մարզում աղքատության կրճատման և տնտեսական զարգացման ամենակարևոր ուղղություններից մեկն է: Այս կապակցությամբ ՄՁՌ-ով առաջարկվում է բիզնես պլանավորման և կառավարման տարածաշրջանային հատուկ մոտեցումների կիրառման միջոցով մարզում բարձրացնել գործարար ակտիվությունը, հատուկ ուշադրություն դարձնելով արտահանմանն ուղղված արդյունաբերության զարգացմանը, մասնավորապես՝ հանքարդյունաբերությանը, թեթև և սննդի արդյունաբերությանն ու ՏՏ ոլորտին:

Մարզում ոլորտի հիմնախնդիրից է հանդիսանում հանքարդյունաբերության խոշոր ձեռնարկությունների փակումը, դրանց գործարկումը պահանջվում է օրինականության սահմաններում: Լուրջ խնդիր է մնացել նաև մեքենաշինության եւ թեթև արդյունաբերության գործող կազմակերպությունները, որոնք աշխատում են հիմնականում իրենց հզորությունների 15-30% սահմաններում, ունեն վերազինման կարիք նոր սարքավորումներով և տեխնիկայով, ինչպես նաև նոր շուկաների բացահայտման:

Մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզի տնտեսության զարգացման համար անհրաժեշտություն է ՓՄՁ-ներին ցուցաբերվող աջակցությունը, առանձին ոլորտների և տարածաշրջանների մակարդակով անցում կատարել մասնավոր հատվածի զարգացման ծրագրային միջոցառումների իրականացմանը, համայնք-մասնավոր հատված համագործակցությանը, մարզի տնտեսության մեջ նոր տեխնոլոգիաների կիրառումը, նոր համատեղ ձեռնարկությունների եւ ներդրումների ապահովումը:

2019թ.-ին մարզի համար առաջնային են համարվում արտահանող արդյունաբերական ոլորտների զարգացումը եւ արտադրության ծավալների աճը: Հանքարդյունաբերության կանգով պայմանավորված արտահանման ծավալները նախորդ տարվա ընթացքում կտրուկ նվազել էին:

Մարզում կիրականացվեն միջոցառումներ, որոնց արդյունքում փոքր եւ միջին ձեռնարկությունների կողմից թողարկվող արտադրանքի տեսակարար կշիռը 2019թ.-ին արդյունաբերական արտադրանքում կբարձրանա 1.5%-ով:

2019թ.-ին Լոռու մարզում Արդյունաբերություն, ՓՄՁ, մասնավոր հատված, ՏՏ եւ զբոսաշրջություն ոլորտում նախատեսված ներդրումների ծավալը նախատեսվում է **12350.2մլն դրամ**, որի արդյունքում ակնկալվում է ձեռնարկությունների թվի եւ 494 նոր աշխատատեղերի ավելացում:

2.1 Արդյունաբերություն եւ մասնավոր հատվածի զարգացում

« Լոռու մարզի տնտեսության առաջատար ճյուղն է արդյունաբերությունը, որի հիմնական ուղղությունները հանքագործական և մշակող արդյունաբերություններն են (մասնավորապես՝ մետաղագործական, սննդի և թեթև, այդ թվում՝ Վանաձորում՝ թեթև

« Լոռու մարզի 2019 թվականի գործունեության ծրագիր

արդյունաբերությունը և մեքենաշինությունը, Ստեփանավանում, Տաշիրում և Սպիտակում՝ սննդի արդյունաբերությունը):

Չնայած համաշխարհային տնտեսությունում անկայունության որոշակի սպասումներին, 2019 թվականի համար մարզի արդյունաբերության գերակա ճյուղերում մասնավոր ընկերությունների, ներդրողների և ֆինանսական կառույցների կողմից նախատեսվել է.

- ❖ Հանքարդյունաբերություն **340.0 մլն դրամ**
- ❖ Մշակող արդյունաբերություն եւ այլ **11500.0 մլն դրամ**

«Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ն 2019թ.-ին նախատեսում է 340.0 մլն դրամի ներդրում, որի արդյունքում տարեվերջին կապահովեն կայուն աշխատատեղեր՝ մոտ 30:

Լոռու մարզը հարուստ է տարբեր տեսակի օգտակար հանածոներով և իր նշանակությամբ երկրորդն է հանրապետությունում:

Մարզի տարածքում 47 կազմակերպություններ ունեն ընդերքարդյունահանման արտոնագրեր, որոնցից 6-ը մետաղական: Մետաղական հանքավայրերից ներկայումս շահագործվում են Շամլուղի պղնձի և Մղարթի ոսկի-բազմամետաղային հանքավայրերը:

Իրանական «Ռադ սանե Վաշամիր գրուպ» ՍՊԸ-ն 2018թ.-ին մարզկենտրոնում ավարտեց գազաբալոնների և կարբոնի գործարանի կառուցումը: Այդ ՍՊԸ-ի ներդրումների ծավալը 2019թ.-ին կկազմի 8.35 մլրդ դրամ, նախատեսվում է ստեղծել շուրջ 100 աշխատատեղ:

Կարի արտադրության բնագավառում «Գլորիա կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն նախատեսում է շուրջ 600.0մլն դրամի ներդրում,որի արդյունքում կավելանա արտադրական հզորություն և կստեղծվի 200 նոր աշխատատեղ:

«ՎԱԲԱ» ՍՊԸ-ն նախատեսել է 2.3մլրդ դրամի ներդրում հակակարկտային ցանցերի արտադրության ոլորտում, որի արդյունքում կստեղծվի 24 աշխատատեղ:

«Արարատ» սննդի կոմբինատի Վանաձորի մասնաճյուղում արտադրության վերազինման նպատակով կներդրվի 200.0մլն. դրամ:

Նախատեսվում է Ստեփանավան համայնքի Կաթնաջուր համայնքում չինական ներդրողների կողմից հիմնել Ջրի շշալցման արտադրամաս:

2.2 Փոքր եւ միջին ձեռներեցություն

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Աջակցություն ՓՄՁ սուբյեկտներին 2019 թվականի պետական ծրագիրը և Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի 2019 թվականի աշխատանքային ծրագիրը դեռ չեն հաստատվել՝ 2019 թվականի ընթացքում ՀՀ մարզերում կատարվելիք աշխատանքների վերաբերյալ կանխատեսումներ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից դեռևս չեն կարող տրամադրվել:

2019թ.-ի փետրվարին նախատեսվում է «Իմ քայլը հանուն Լոռու մարզի» ներդրումային բիզնես ֆորում-ցուցահանդեսը, որտեղ պոտենցիալ ներդրողներին կներկայացվեն շուրջ 50 ներդրումային ծրագրեր վերամշակող արդյունաբերության, գյուղատնտեսության, զբոսաշրջության եւ տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում:

ՀՀ Լոռու մարզի 2019 թվականի գործունեության ծրագիր

Հայաստանի Վորլդ Վիժըն միջազգային կազմակերպության միջոցով կշարունակվեն Թումանյանի եւ Ստեփանավանի տարածաշրջաններում իրականացվել «Տնտեսական զարգացման» տեղական արժեշղթայի զարգացում ծրագիրը:

Զբաղվածության մարզային գրասենյակների միջոցով 2019թ.-ին մարզում կիրականացվեն գործատուներին աջակցման ծրագրեր ավելի քան 207.095մլն դրամ արժողությամբ, այդ թվում՝

- ✓ Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում
- ✓ Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքային ունակությունների և կարողությունների ձեռքբերման համար միանվագ փոխհատուցում գործատուին
- ✓ Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում

2.3 Տեղեկատվական Տեխնոլոգիաներ

ՀՀ կառավարության 2014թ. փետրվարի 13-ի N 227-Ա որոշման համաձայն Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամը (ՁԻՀ) ստանձնեց Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի (ՎՏԿ) գլխավոր օպերատորի պարտականությունները: ՎՏԿ-ն իր գործունեությունը ծավալում է երեք հիմնական ուղղություններով՝

1. Մասնագիտական կարողությունների զարգացում,
2. Բիզնես զարգացում և ակսելերացիա,
3. Կառավարվող աշխատանքային տարածք:

Ներկայումս ՎՏԿ-ում գործում է 12 ընկերություն, որն ապահովել է 102 աշխատատեղ: Կազմակերպվում են ձեռնարկատիրական եւ կառավարման հմտությունների զարգացմանը նվիրված սեմինարներ եւ դասախոսություններ, մարզում գործող ընկերություններին տրամադրվում են բիզնես խորհրդատվություն:

Համաձայն ՄԶՌ-ի նպատակների, կանխատեսվել է ՏՏ ոլորտի մասնագետների աճ մարզում, որի 4%-ը նախատեսվում է 2019թ.-ին: 2019թ.-ին ՀԶԻ-ի կողմից կներգրավվեն եւս 5 ընկերություն ՎՏԿ-ում գործելու համար, ձեավորելով 80 նոր աշխատատեղ:

2019թ.-ին կազմակերպվեն միջոցառումներ, այդ թվում ՀՀ-ում զբոսաշրջության զարգացմանն ուղղած գաղափարների հեքըթոն եւ ճարտարագիտական 3-րդ համաժողով-ցուցահանդեսը:

2019թ.-ին կարունակվի Լոռու մարզում Հայաստանի Մանուկներ Հիմնադրամի կողմից բացվեց ՍՄԱՐԹ կենտրոնի բնականոն աշխատանքները, որի նպատակը գյուղական կյանքի ակտիվացումն է, դպրոցահասակ երեխաների եւ երիտասարդների կարողությունների եւ ունակությունների զարգացումը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ներդրումները գնահատված չեն:

2.4 Զբոսաշրջություն

ՀՀ Լոռու մարզի 2019 թվականի գործունեության ծրագիր

2019թ.-ին ծրագրեր կիրականացվեն էկոտուրիզմի զարգացման ուղղությամբ դեպի պատմամշակութային կոթողներ տանող ճանապարհների բարեկարգման, զբոսաշրջային երթուղիների մշակման, հյուրատների եւ այլ ենթակառուցների ստեղծման աշխատանքներ:

Ներդրումային ծրագրերի իրականացման արդյունքում կյանքի կկոչվեն մարզպետարանի եւ մասնավորի հետ համատեղ մշակված ծրագրեր՝ ուղղված նոր հյուրատների ստեղծմանը, զբոսաշրջային երթուղիների մշակմանը: Համայնքների գրավչությունը բարձրացնելով կանխատեսվում է մարզ այցելող զբոսաշրջիկների թիվը հասցնել 200.0հազարի:

Մարզում գործում են զբոսաշրջային 6 տեղեկատվական եւ 1 հետազոտական կենտրոններ, որոնց գործունեության արդյունքում 2019թ.-ին բազմաբնույթ ծրագրեր կիրականացվեն, այդ թվում՝ ՀՀ կառավարության աջակցությամբ, ՖՀ ՊԱԿԱ ռեգիոնի հետ համատեղ «Լոռու» տուրիզմի զարգացման հիմնադրամի «Թունանյան աշխարհ» զբոսաշրջության գրասենյակի կողմից *Մորզանի անվան ցուցասրահ-թանգարանի սրտեղծման ծրագիրը, շուրջ 73.08մլն դրամ արժողությամբ:*

ԵՄ համաֆինանսավորմամբ ՀՀ Լոռու, Արմավիրի եւ Սյունիքի մարզերում իրականացվող «Տարածաշրջանային ՓՄՁ-ների մրցունակության խթանումը» ծրագրի ենթակառուցվածքային բաղադրիչի շրջանակներում նախատեսվում է ՀՀ Լոռու մարզում «ճամփեզրյա կայանի» կառուցում և գործարկում (ծրագրի արժեքը՝ 230.0մլն դրամ): Այն կհանդիսանա տարածաշրջանային տնտեսական զարգացմանն ուղղված բազմաֆունկցիոնալ կառույց, որը կձառայի նաեւ որպես՝ տեղեկատվական կենտրոն այցելուների և զբոսաշրջիկների համար տեղեկատվություն կտարածվի մարզի զբոսաշրջային գրավչությունների և ծառայությունների վերաբերյալ: Կայանի կողմից հետագում կարող են կազմակերպվել նաև տեղական ապրանքների ցուցահանդեսներ, տոնավաճառներ, փառատոններ, վարպետաց դասեր և այլ միջոցառումներ՝ տարածաշրջանի գրավչությունները և տեղական արտադրանքը ներկայացնելու և առաջ մղելու նպատակով:

2019թ.-ին իրականացման համար Վանաձոր, Ալավերդի, Տաշիր, Մեծավան համայնքների կողմից մշակվել են զբոսաշրջության խթանմանն ու զարգացմանն ուղղված ծրագրեր, որոնք կյանքի կկոչվեն ներդրումների առկայության դեպքում.

1. Վանաձորի գրավչության բարձրացման ծրագիր (5 ենթածրագրերով),
2. Վանաձոր, Ալավերդի, Տաշիր, Մեծավան համայնքներում ենթակառուցվածքների զարգացման ներդրումային ծրագրեր:

Արդվի համայնքում նախատեսվում է «Արդվի ռեզորտ» ծրագրի իրականացում, որն իրենից ներկայացնում է հյուրանոցային տնտեսության եւ հանգստի գոտու ստեղծում:

Ոլորտում ներդրումների ծավալը կազմում է 303.08մլն դրամ:

3. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

2019թ.-ին գյուղատնտեսության բնագավառում Լոռու մարզում ներդրումների ծավալը նախատեսվում է **2849.04մլն** դրամ:

«Լոռու մարզում առկա ֆերմերային տնտեսությունների թիվը.

- ✓ փոքր տնտեսություններ - 587
- ✓ միջին տնտեսություններ - 197
- ✓ խոշոր տնտեսություններ - 36

Գյուղատնտեսությունում արդիական տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ լիզինգի աջակցության պետական ծրագրով մարզում 2018թ.-ին տրամադրվել է 20 միավոր գյուղտեխնիկա:

Մարզում առկա է 3 սպանդանոց, որից 2-ը գործող՝ «Խաչիկ Տիտանյան» Ա/Չ (Թումանյանի տարածաշրջանում), «Միտք-Կ» ՍՊԸ (Գուգարքի տարածաշրջանում), իսկ «Բոզոյան» ՍՊԸ (Տաշիրի տարածաշրջանում) գտնվում է գործարկման փուլում: Եվս 2 սպանդանոց գտնվում է գործարկման փուլում: Սպանդանոցների հզորությունը այժմ կազմում է 11700 տոննա/տարի, որը սակայն նոր սպանդանոցների գործարկման հետ կավելանա:

Ըստ ՄԶՌ-ի ոլորտի հիմնախնդիրներն են մշակաբույսերի միջին բերքատվությունը, որը զիջում է հանրապետական միջին ցուցանիշներին: Պատճառները հիմնականում ինտենսիվ տեխնոլոգիաների, մարզի կլիմայական պայմաններին հարմարեցված սերմացուների բացակայությունն է, գյուղատնտեսական տեխնիկայի ֆիզիկական և բարոյական մաշվածությունը:

Մարզի ցանքատարածությունները բնական աղետներից պաշտպանելու համար անհրաժեշտ են կարկտակայաններ: Համայնքներին տրամադրվող պետական աջակցության այլ սուբվենցիաներ ծրագրով նախատեսվում է Լոռի Բերդ եւ Գյուլագարակ խոշորացված համայնքներում հակակարկտային 11 կայանների տեղադրում: Հակակարկտային ցանցերով ցանցապատված այգիների ներկա մակերեսը 1.5 հա է: Ոռոգելի 9610 հա հողատարածքներից փաստացի ոռոգվում է շուրջ 1.9-2.0 հազ.հա:

Գյուղատնտեսության զարգացման համար խնդիր են մնում համայնքների հանդամիջյան և դեպի հեռահար արոտավայրեր-խոտհարք տանող անբարեկարգ ճանապարհները:

Մարզում առկա 42095 հա վարելահողերից յուրաքանչյուր տարի մշակվում է 65-75%-ը: 2019թ. նախատեսվում է վարելահողերի նպատակային օգտագործումը ավելացնել 2 104հա-ով (կամ 5%-ով):

«Գյուղատնտեսության նախարարությունից ստացված տեղեկատվության համաձայն Լոռու մարզում կիրականացվեն.

- ✓ «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման», «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի

«Լոռու մարզի 2019 թվականի գործունեության ծրագիր»

Ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության», «Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման», «Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության», «ՀՀ-ում ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների հիմնման համար վարկային տոկոսադրույքների սուբսիդավորում», «ՀՀ գյուղատնտեսությունում հակակարկտային ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» ծրագրերը, որոնց շրջանակներում կտրամադրվեն նպատակային վարկեր՝ վարկի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորմամբ:

✓ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագիրը

✓ հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման, բույսերի պաշտպանության, սերմերի որակի ստուգման և պետական սորտափորձարկման միջոցառումներ, ինչպես նաև անհատական խորհրդատվություններ, ծրագրային և խմբային դասընթացներ:

Մարզի գյուղատնտեսության ոլորտում 2019 թ.-ին նախատեսվում է իրականացնել.

«Բոզոյան» ՍՊԸ-ի կողմից խոզաբուծական տնտեսության կառուցման աշխատանքները՝ 500 գլուխ խոզամոր տարողությամբ: Ներդրումների ծավալը 500.0 մլն. դրամ, նախատեսվում է 40-50 աշխատատեղերի ստեղծում:

Սպիտակի թռչնաբուծական ֆաբրիկայում կկառուցվի ինկուբատորային արտադրամաս, կներդրվի 700.0 մլն. դրամ, կստեղծվի 10 նոր աշխատատեղեր:

Կարմիր Աղեկի բնակավայրում «Վահե Հովհաննիսյան» Ա/Ձ-ի կողմից թռչնաբուծական տնտեսությունում կիրականացվի արտադրական սարքավորումներով վերազինում և ածան հավերի գլխաքանակի ավելացում՝ 1000-ով: Ներդրումների ծավալը 15.0 մլն. դրամ:

Սարալանջ համայնքում ոչխարաբուծությամբ զբաղվող «Էրֆյան» ՍՊԸ-ի կողմից կներդրվի 50.0 մլն. դրամ, 1000 գլխով ոչխարների գլխաքանակի ավելացմամբ, նոր 10 աշխատատեղերի ստեղծում,

Օձուն համայնքում Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի ծրագրով, պետ. բյուջեի միջոցներով, կհիմնվի անասնաբուժական սպասարկման կենտրոն, ներդրումների ծավալը 60.0 մլն. դրամ:

Մեծավան համայնքի Ձյունաշող բնակավայրում «Աբսալյուտ օրգանիկ» ՍՊԸ կառուցում է կաթի վերամշակման և սպանդի արտադրամասերով համալրված անասնաբուծական համալիր, արժեքը 200.0 մլն. դրամ, կստեղծվի 12 աշխատատեղ

Մարզի անասնաբուժական ծառայությունների կողմից պետական բյուջեյի միջոցներով, կիրականացվի գյուղատնտեսական կենդանիների հակաանասնահամաճարակային հիվանդությունների դեմ շուրջ 9 կանխարգելիչ և 3 ախտորոշիչ միջոցառում:

«Անասնաբուծության զարգացում հարավ-հյուսիս» ծրագրի շրջանակներում համայնքներում կիրականացվի անասնաբուժական կետերի հիմնում, անասնաբուժական ֆերմայի ստեղծում, արոտային ենթակառուցվածքների (ջրախմոց, արոտ տանող ճանապարհ, կացարան, մակատեղ, կթի սրահ և այլն) կառուցում: Ծրագրի ֆնանսավորումը կկազմի 100.0 մլն. դրամ, կստեղծվի 20 աշխատատեղ

ՀՀ կառավարության հրատապ ծրագրով կիրականացվեն մարզի ոռոգման համակարգերի հիմնանորոգման աշխատանքներ: ՀՀ պետբյուջեից ԶՕԸ-ին հատկացվող գումարի չափը շուրջ 25.17 մլն. դրամ: «Լոռի» ԶՕԸ-ի և ՀՀ ԷԵԲՊՆ Զրային պետական կոմիտեի միջոցով գարնան նախապատրաստական աշխատանքների կատարում և ջրանցքների մաքրում: «Լոռի» ԶՕԸ-ի 2019թ.-ի բյուջեի նախագիծով Լոռու մարզում ոռոգելի հողերի մշակման ծավալները դարձնել 2250 հա (նախորդ տարվա հունիս-հոկտեմբեր ամիսներին փաստացի ոռոգված 1581 հա-ի փոխարեն):

Պետական աջակցություն կցուցաբերվի ոռոգման արդյունավետ համակարգերի (կաթիլային ոռոգման) ներդրման գործընթացում, նպատակային վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման միջոցով, բարձրացնելով վարկավորման մատչելիության մակարդակը:

ՄԱԿ-ի զագացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կիրականացվեն Գարգառ և Վարդաբլուր բնակավայրերում ոռոգման համակարգի ներդրում, արևային ֆոտովոլտային կայանի կառուցում: Գարգառ գետից ոռոգման ջուր կմղվի շուրջ 230 հա վարելահողեր: Գոգարան համայնքում ջրահավաք ավազանի և 4600 մ ինքնահոս ոռոգման համակարգի կառուցում (86 հա), միջին ինտենսիվության տնկիների տրամադրում 300 ընտանիքների: 2600 մ ոռոգման համակարգի կառուցում Կաթնաջուր (60 հա) և 4200 մ՝ Լեռնանցք (60 հա) համայնքներում:

Համայնքներին տրամադրվող պետական աջակցության այլ սուբվենցիաներ ծրագրով մարզի Ախթալա, Հարթագյուղ, Սարահարթ, Օծուն համայնքներում նախատեսվում է ոռոգման համակարգերի անցկացում:

Գյուղատնտեսական ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրային դասնթացների իրականացման արդյունքում մասնակիցների կողմից ձեռք բերված հավաստագիրը թույլ կտա մասնակցել գյուղատնտեսական ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրին և ստանալ գյուղատնտեսության զարգացման համար մատչելի վարկեր:

ՀՀ ԳՆ տրամադրած տեղեկատվության համաձայն, իրականացվելու է «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» վարկային երկրորդ ծրագիրը, որի շրջանակներում նախատեսվում է գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերում մարզի 7 համայնքում՝ թվով 37 միավոր տեխնիկա, արժեշղթայի

զարգացման 3-րդ փուլի մրցույթով ընտրված 3 ենթաձրագրերի իրականացման շարունակում, Օձուն համայնքում անասնաբուժական սպասարկման կենտրոնի հիմնում: Գյուղտեխնիկա է նախատեսվում նաեւ ձեռքբերել պետական աջակցության այլ սուբվենցիաների ծրագրով Լեռնապատ, Լոռի Բերդ, Կաթնաջուր, Մեծավան համայնքները:

Պետական ֆինանսավորմամբ 2019թ.-ին «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակներում կիրականացվեն 9 կանխարգելիչ և 3 ախտորոշիչ միջոցառում:

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից, ԵՄ ֆինանսավորմամբ 2019թ.-ին նախատեսված «Ճամփեզրյա կայանի» կառուցումը կծառայի նաև գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրվող գյուղ. մթերքների վաճառակետ:

4.ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Լոռու մարզի անտառային պետական ֆոնդը կազմում է 101,205.0 հա, որից անտառածածկ է 85,799.6 հա-ը: Անտառային ֆոնդը կազմում է մարզի տարածքի մոտ 27%-ը, հանրապետության անտառային ծածկույթի 30%-ը: Մարզի անտառները լեռնային են, ունեն ընդգծված հողապաշտպան, ջրապաշտպան և կլիմայակարգավորիչ նշանակություն, ինչպես նաև սոցիալ-տնտեսական, գիտական բարձր արժեք և աչքի են ընկնում բուսական տեսակների բազմազանությամբ: Մարզի անտառկազմող հիմնական ծառատեսակներն են՝ հաճարենին, կաղնին, բոխին և սոճին, իսկ ոչ հիմնական տեսակներ են համարվում լորենին, կեչին, թեղին, հացենին:

2019թ. ընթացքում «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամի կողմից նախկինում հիմնադրված անտառմշակույթների խնամքի, ցանկապատի վերանորոգման աշխատանքները կալանավորվեն տարեսկզբին իրականացվող ուսումնասիրություններից հետո, ըստ անհրաժեշտության: Նախատեսվում է նաև ծառատնկման աշխատանքներ իրականացնել Ստեփանավան քաղաքի 42 հա մակերես ունեցող տարածքում, ինչպես նաև նախնական պայմանավորվածություն կա մարզի մի քանի համայնքներում նույնպես իրականացնել շուրջ 24 հա անտառտնկման աշխատանքներ: Ընդհանուր առմամբ 2019թ. մարզում հիմնադրամի կողմից նախատեսվում է տնկել շուրջ 200 000 տնկի:

Թեղուտի անտառավերականգնման ծրագրի շրջանակներում Շնող 2019թ. նախատեսվում է ևս 15 հա պտղատու նոր այգիների հիմնում:

Ընթացքի մեջ է ՀՀ կառավարության, UNDP և GEF միջազգային կազմակերպությունների նախաձեռնությամբ Լոռու և Տավուշի մարզերում «Հողերի և անտառների կայուն կառավարման ներդրումը Հյուսիս-արևելյան Հայաստանի չոր լեռնային լանդշաֆտներում» ծրագիրը՝ որի շրջանակներում 2019թ. նախատեսվում է իրականացնել բազմաբնույթ ծրագրեր այդ թվում.

- Մեծ Պարնի համայնքում վառելափայտին փոխարինող բրիկետների արտադրության ընդլայնում:
- Արբանյակային բարձր լուծաչափի պատկերների ձեռքբերում անտառզույքագրման, սահմանների ճշտման և այլ հարակից աշխատանքներում օգտագործելու համար:

ՀՀ Լոռու մարզի 2019 թվականի գործունեության ծրագիր

- GPS և TDC գնում, ուսուցում և տրամադրում Ա/S-ին և պահպանվող տարածքներին:
- Դեմոնիտրացիոն շինարարական սարքավորումների ձեռքբերում, ուսուցում և տրամադրում ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչությանը:
- 2000 հա դեգրադացված անտառների վերակազմում «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Լոռու և Տավուշի մարզերի անտառտնտեսությունների տարածքներում՝ հանքայնացման, ցանքսի, կոճղաշիվային աշխատանքների և ցանկապատման միջոցառումների շնորհիվ:
- Փոքր դրամաշնորհային ծրագրերի սխեմայով դրամաշնորհային ծրագրերի իրականացում Լոռու մարզում, մասնավորապես նախատեսվում է հակակարկտային ցանցերի, պասիվ արևային ջերմոցների, էներգաարդյունավետ վառարանների և արևային մարտկոցների տեղադրում:

ՀՀ Լոռու մարզի համայնքներում աղբահանության աշխատանքներն իրականացնելու համար, բոլոր 56 համայնքների ղեկավարներին հանձնարարվել է ծախսեր նախատեսել 2019 թվականի բյուջեն կազմելիս, ինչպես նաև աղբահանության պայմանագրեր կնքել համայնքի բնակչության և համայնքում գործող տնտեսվարող սուբյեկտների հետ: Պայմանագրերի կնքումն իրականացվելու է համաձայն ՀՀ ՏԿԶ նախարարի հանձնարարականին կից դրույքաչափերի կիրառման մեթոդական ուղեցույցի: Համայնքների ղեկավարներին առաջարկվել է ինչպես իրենց բյուջեների, այնպես էլ դոնոր և այլ կազմակերպությունների միջոցով ձեռք բերել ժամանակակից տեխնիկա՝ սանիտարական մաքրման աշխատանքները պատշաճ իրականացնելու համար: *01.01.2019թ.-ի դրությամբ մարզում փակված աղբավայրերի թիվը 341 է, շահագործվող աղբավայրերի թիվը՝ 7: 2018թ. աղբահանություն իրականացնող բնակավայրերի թիվը հասել է 108-ի, հավաքագրվող աղբահանության վճարները 286.3 մլն դրամ, որից 60.1մլն դրամը իրավաբանական անձանցից:*

Համայնքներին տրամադրվող պետական աջակցության այլ սուբվենցիաներ ծրագրով Վանաձոր համայնքը նախատեսում է ձեռք բերել 2 բազմաֆունկցիոնալ տեխնիկա, սանիտարական աշխատանքներ իրականացնելու համար:

«ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների հարակից էկոհամակարգերի կայուն կառավարում և համայնքային կարողությունների զարգացում» ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Մարգահովիտ և Ֆիոլետովո համայնքներում դեգրադացված բնական և գյուղատնտեսական լանդշաֆտների կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականության բարձրացում՝ կերի կայուն բազայի ստեղծման, դաշտամիջյան ճանապարհների վերանորոգման և այլ բնապահպանական ծրագրերի իրականացման ճանապարհով: Լոռու մարզում միջազգային կազմակերպությունների և դոնորների կողմից իրականացվող ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 79.7մլն դրամ:

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն պետական բյուջեից վնասակար ազդեցության ենթարկվող մարզի համայնքներին 2019թ. բնապահպանական ու

առողջապահական ծրագրերի կատարման համար նախատեսված է հատկացնել շուրջ 128.9 մլն. դրամ, համապատասխանաբար.

- Ալավերդի համայնքին – 100 467.39 հազ. դրամ;
- Օձուն համայնքին - 28 470.4 հազ. դրամ:

Բնապահպանական վճարներից համայնքների վարչական բյուջեներ մուտքագրվող մասհանումները հանդիսանում են նպատակային միջոցներ և օգտագործվում են տվյալ համայնքների տարածքում բացառապես բնապահպանական ծրագրերի իրականացման համար: ՀՀ մարզպետարանի կողմից կիրականացվեն կիսամյակային և տարեկան արդյունքների մոնիտորինգ՝ համայնքների կողմից ներկայացված բնապահպանական ծրագրերին համապատասխան:

5. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

5.1 Կրթություն

ՀՀ Լոռու մարզում գործում են 163 պետական հանրակրթական ուսումնական հաստատություն, որից 68-ը՝ հիմնական, 81-ը՝ միջնակարգ, 11-ը՝ ավագ, 1- հատուկ դպրոց և 2 վարժարան:

Առ 01.01.2019թ.-ին մարզի դպրոցներում աշակերտ/ուսուցիչ հարաբերակցությունը կազմում է 8.8/1: Միջազգային և հանրապետական օլիմպիադաների մարզի մրցանակակիրների թիվը 2018թ.-ին 32 է, նախորդ տարվա նկատմամբ 20-ով պակաս, ուսումը միջազգային կամ ՀՀ ռեյտինգային ԲՈՒՀ-երում շարունակողների թիվը 379 է, նախորդ տարվա նկատմամբ այն նվազել է 273-ով: 2019թ.-ին նախորդ տարվա նկատմամբ շրջանավարտների թվի նվազման հետ կապված կնվազի օլիմպիադաների մասնակիցների և բուհերում ուսումը շարունակողների քանակը:

ԸՍՏ ՄՁՌ-ի մարզի որոշ հանրակրթական և նախադպրոցական ուսումնական հաստատություններում առկա են կապիտալ վերանորոգման, շուրջօրյա ջրամատակարարման, կոյուղով, խաղահրապարակներով, մարզադահլիճներով և ջեռուցման կենտրոնացված համակարգերով ապահովման խնդիրները, որոնք բացասաբար են անդրադառնում երեխաների և դեռահասների առողջության վրա:

2019թ.-ի մարզի գործունեության ծրագրում ներառված են այն միջոցառումները, որոնք նպատակաուղղված են մարզի կրթական հաստատությունների կառավարման արդյունավետության և կրթության որակի բարձրացմանը:

2019թ.-ին կրթական պետական ոչ առետրային կազմակերպություններին պետական բյուջեից հատկացված գումարը կազմում է **6966.5 մլրդ դրամ:**

Կիրականացվեն հետևյալ միջոցառումները.

1.Նախակրթարանների թիվը 6-ով ավելացնելու հնարավորության ուսումնասիրություն և իրականացում:

ՀՀ Լոռու մարզի 2019 թվականի գործունեության ծրագիր

2019թ.-ին կուսումնասիրվի նախակրթարանների թիվը 6-ով ավելացնելու հնարավորությունը: Արդյունքում դպրոցահեն նախակրթարաններում կապահովվի ավագ նախադպրոցական տարիքի երեխաների ընդգրկվածության աճ եւ երեխաների հաճախումների թվի ավելացում:

2. Մարզում գործող թերբեռնված դպրոցների ռացիոնալացման ուսումնասիրություն

Մարզում գործում են դպրոցներ, որոնք թերբեռնված են և շենքային հզորությունները ռացիոնալ չեն օգտագործվում: Նմանատիպ դպրոցները հիմնականում չունեն ժամանակակից պահանջներին համապատասխանող շենքային պայմաններ և գույքային ապահովվածություն: Առանձին առարկաներ դասավանդվում են ոչ մասնագետների կողմից:

Թերբեռնված դպրոցներում կիրականացվի ուսումնասիրություն, ռացիոնալացման ենթակա դպրոցների մասով: Արդյունքում աշակերտները կհաճախեն հարակից, գույքով և մասնագետ կադրերով ապահովված դպրոցներ: Կիրականացվի պետական բյուջեի միջոցների ռացիոնալ օգտագործում:

3. ա/Մարզի հանրակրթական դպրոցներում «Սմարթ» դասարանների ավելացում

Լոռու մարզում 2019 թվականին «Կրթության բարելավում» վարկային ծրագրով նախատեսվում է հանրակրթական ուսումնական հաստատությունների վարչական և մանկավարժական աշխատակազմի վերապատրաստում՝ տեխնոլոգիաների կիրառման ուղղությամբ: Ծրագիրը իրականացվելու է 2019 թվականի փետրվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում:

2019թ. կնախատեսվեն «Սմարթ» դասարանների հիմնում մարզի տարբեր համայնքներում:

բ/ Մարզում կան շատ դպրոցներ, որոնք թերբեռնված են: Դրանք հիմնականում գյուղական կամ սահմանամերձ դպրոցներն են: Չկան անհրաժեշտ քանակությամբ, բարձրակարգ մասնագետներ, դասավանդող անձնակազմը բավարար չի տիրապետում կրթության ժամանակակից մեթոդներին և տեխնոլոգիաներին, դեռևս շոշափելի թիվ են կազմում ոչ մասնագետները:

Արդյունքում ընդլայնելով ուսումնական գործընթացում տեղեկատվական-հաղորդակցման տեխնոլոգիաների՝ որպես ուսուցման և դասավանդման միջոցի կիրառումը, կստեղծվի բարձրակարգ մասնագետներով համալրված դպրոցների բազա, կկազմվի ժամանակացույց՝ նախատեսելով շաբաթական առնվազն մեկ դպրոցի հետ հեռավար ուսուցմամբ դասի անցկացում համացանցի միջոցով:

4. Մարզի մի շարք կրթական հաստատությունների շենքային պայմանները բավարար չեն որակյալ կրթական գործունեություն իրականացնելու համար: Այդ նպատակով նախատեսվում է 2019 թվականին կառուցման, վերակառուցման և հիմնանորոգման աշխատանքներ իրականացնել մարզի թվով 7 եւ ջեռուցման խնդիր կլուծվեն 11 կրթական հաստատություններում:

Արդյունքում՝ կիրականացվեն քոլեջների, հանրակրթական դպրոցների և մանկապարտեզների շենքային պայմանների բարելավում և որակյալ կրթություն ստանալու համար անհրաժեշտ պայմանների ստեղծում:

5. Մարզում գործող միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ռացիոնալացման հնարավորությունների ուսումնասիրություն և գործողությունների ծրագրի կազմում:

ՀՀ և Եվրոպական հանձնաժողովի միջև 2016 թվականի դեկտեմբերին ստորագրված «Որակավորումների բարելավում ավելի լավ աշխատատեղերի համար» ֆինանսավորման համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) շրջանակներում ՀՀ ԿԳ նախարարության կողմից Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն առաջարկություն է ներկայացվել Համաձայնագրով նախատեսված նախապայմանները և թիրախները փոփոխելու և ՀՀ Լոռու մարզում՝ Վանաձորի և Ստեփանավանի գյուղատնտեսական քոլեջներում, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Վանաձորի մասնաճյուղում, գյուղատնտեսական ուղղվածության միասնական ուսումնական կենտրոն (կլաստեր) ստեղծելու մասին:

Արդյունքում՝ կունենանք կրթության որակի բարձրացում, որակյալ դասախոսական կազմի և ֆինանսական միջոցների կենտրոնացում: Ուսանողների ներհոսք այլ մարզերից և արտերկրից: Ներկայումս առաջարկությունը քննարկման փուլում է գտնվում:

5.2 Մշակույթ, սպորտ եւ երիտասարդության հարցեր

ՀՀ մշակույթի նախարարությունը 2019 թվականին շարունակելու է իրականացնել ՀՀ Լոռու մարզի Քոբայր համայնքի Քոբայրավանքի, Սանահինի, Բարձրաքաշ Սուրբ Գրիգոր (գյուղ Դսեղ) վանական համալիրների ենթակառուցվածքների վերականգնման աշխատանքներ:

Նախատեսվում է Հ.Թումանյանի և Կոմիտասի ծննդյան 150-ամյակներին նվիրված հանդիսությունների, փառատոների, այլ բազմաբնույթ միջոցառումների կազմակերպում և անցկացում, Լոռի-Փամբակ երկրագիտական թանգարանի Նոր-նորագույն պատմության ֆոնդի մուտքագրված արժեքների ստուգում:

2019թ.-ի ընթացքում նախատեսվում է տարբեր մարզաձևերի զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծում, այդ թվում՝ մարզադպրոցների, մարզադահլիճների վերանորոգում և մարզադաշտի վերակառուցում, ինչպես նաև մասսայական սպորտի զարգացում, այդ թվում՝ մարզական փառատոն, գյուղական մարզական խաղեր, տարեցների հանրապետական խաղեր և այլ մասսայական միջոցառումների անցկացում:

2019թ.-ին ոլորտի միջոցառումների իրականացման համար նախատեսված գումարը **56.6մլն** դրամ է:

5.3 Առողջապահություն

Հաշվի առնելով մարզի առողջապահության ոլորտի ներկա իրավիճակը, առողջապահական ծառայությունների մատչելիության ու որակի բարձրացումը մարզում սահմանվել է որպես ՄՁՌ-ի ոլորտային գերակա նպատակ: Այս նպատակին է միտված

ՀՀ Լոռու մարզի 2019 թվականի գործունեության ծրագիր

առողջության առաջնային պահպանման մակարդակի, առաջնային և երկրորդային բուժօգնության բուժհաստատությունների շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի բարելավման, կադրերի վերապատրաստման տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ուժեղացման ուղղությունները:

2019թ.-ին ոլորտում կշարունակվեն իրականացվել միջոցառումները նպատակաուղղված.

- Համայնքային և մարզային մակարդակներում կառավարման, մոնիտորինգի և վերահսկողության բարելավմանը
- Ազգաբնակչությանը ցուցաբերվող բուժօգնության որակի և մատչելիության շարունակական բարձրացմանը
- Բնակչության ոչ վարակիչ հիվանդություններով հիվանդացության և մահացության կրճատմանը
- Երեխաներին և դեռահասներին ցուցաբերվող բուժօգնության որակի և մատչելիության շարունակական բարձրացմանը
- Նորածինների առողջության բարելավմանը, նորածնային հիվանդացության և մահացության կրճատմանը, մայրական մահացության կրճատմանը
- Վաղ հասակի երեխաների հիվանդացության և մահացության իջեցմանը, առողջ աճի և զարգացման ապահովմանը

2019թ.-ին մարզում կիրականցվեն **5.126մլրդ** դրամի աշխատանքներ, այդ թվում.

✓ մարզի առողջապահական ընկերությունների կանխատեսվող բյուջեն, ներառյալ պետական պարվերը եւ վճարովի ծառայությունները)

✓ առողջապահական ընկերությունների նոր ժամանակակից սարքավորումներով հագեցում և նոր ծառայությունների ներդրում

✓ 2019 թվականին վճարովի ծառայությունների գները սահմանել շուկայական գներին համապատասխան /ոչ պակաս սոցիալական փաթեթով մատուցված ծառայությունների գների/

✓ Բժշկական կադրերով համալրում՝ կազմակերպելով դինամիկ սերնդափոխություն:

Առողջապահական կազմակերպությունների տարեկան բյուջեի մեջ վճարովի ծառայությունների տեսակարար կշիռը 31.12.2018թ.-ի դրությամբ կազմել է 720.7մլն դրամ: 2019թ.-ին նախատեսվում է վճարովի ծառայությունների աճ շուրջ 11%-ով:

5.4 Սոցիալական ապահովություն

Լոռու մարզում ընտանեկան եւ սոցիալական նպաստ ստացողների թիվը 17122 է, եռամսյակային հրապատ օգնություն ստացող ընտանիքների քանակը՝ 744(միջին ամսական), կենսաթոշակառուների թիվը 49579, հաշմանդամների թիվը՝ 16268/որից՝ 664՝ մանկուց): Ըստ ՄՁՌ-ի ՀՀ մարզերից ամենաշատ կենսաթոշակառուներ եւ հաշմանդամներ բնակվում են Լոռու մարզում:

2019թ.-ին սոցալաշտպանության բնագավառում նախատեսվում **6.314 մլրդ դրամի** աշխատանքների իրականացում, այդ թվում՝ ընտանեկան եւ սոց.նպաստների, հրատապ օգնության վճարումներ:

Ծրագրային աշխատանքների իրականացման համար ցանկալի է, որ բացի պետական բյուջեի միջոցներից լինեն նաև որոշակի ներդրումներ միջազգային, դոնոր և մասնավոր կազմակերպությունների կողմից, որոնք կնպաստակաուղղվեն ՄՁՌ-ով ոլորտում նախատեսված աշխատանքների իրականացմանը:

2019թ. սոցիալական ծառայությունների մատչելիությունն ու որակը բարձրացնելու համար անհրաժեշտ է ընդլայնել սոցիալապես խոցելի խմբերին ուղղված աջակցության ծրագրերը, մասնավորապես բարելավել կարիքավոր ընտանիքների, անօգնական տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց և գործազուրկների պաշտպանվածությունը: Բազմամյա ծրագրերի իրականացման համար նախատեսվում են իրականացնել ընդգրկուն աշխատանքներ, որոնցում կարևորվում է նաև սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների շարունակական աջակցության ցուցաբերումը:

Պետությունը ուղղորդված և կանոնակարգված աշխատանքներ է իրականացնում ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի կայացման ուղղությամբ, որը ՄՁԳ ծրագրով նախատեսված աշխատանքներից է, որի իրականացմամբ Լոռու մարզում արմատապես կլուծվի այդ կառույցների շենքային պայմանների բարելավման հիմնախնդիրը: 2019թ. սպասելիքները մեծ են, քանի որ պետական ծրագրային աշխատանքներում Լոռու մարզում Համալիր կենտրոնների ձևավորումը օրակարգային է. Վանաձորում վերանորոգվել է համալիր կենտրոնը, Տաշիրում այն ընթացքի մեջ է, իսկ մյուս տարածաշրջանային կենտրոններում՝ Սպիտակում և Ստեփանավանում՝ կառուցում, Ալավերդիում տրամադրված տարածքների վերապրոֆիլավորում: Պետական քաղաքականության հիմքում դրված է որակյալ համալիր սոցիալական ծառայությունների մատուցումը, որի իրականացման համար շատ է կարևորվում նաև սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների /պետական, ոչ պետական/ համակարգչային տեխնիկայով հագեցվածությունը և համացանցային կապով ապահովումը:

Որակյալ սոցիալական ծառայություններ մատուցելու նախապայման է բնագավառում ներգրավված սոցիալական աշխատանքի մասնագետների մասնագիտական հմտությունների շարունակական կրթությունը:

2019թ. զբաղվածության արդյունավետությունը բարձրացնելու, գործազուրկների և աշխատանք փնտրողների համար աշխատանքի հնարավորությունները մեծացնելու նպատակով ՀՀ կառավարությունը կշարունակի իր նպատակամետ քաղաքականությունը:

ՄՁՌ առաջարկվել է նաև տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների լուծմանն ուղղված քաղաքային համայնքների մշակութային և սպորտային կենտրոններում թեքահարթակների կառուցումը:

2019թ. նոր որակ է սպասվում հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների ապահովման հարցում՝ ելնելով է ՀՀ աշխատանքի և

սոցիալական հարցերի նախարարության թիրախավորված տարեկան միջոցառումների ծրագրից:

6. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

6.1 Տրանսպորտ և ճանապարհաշինություն

Համաձայն ՀՀ կառավարության 2014թ. փետրվարի 13-ի N265-Ն որոշման, Լոռու մարզում ավտոմոբիլային ճանապարհների ցանցը կազմում է 891.1կմ, այդ թվում ըստ նշանակության՝

- միջպետական 218.9 կմ
- հանրապետական 264.3 կմ
- մարզային (տեղական) 407.9 կմ

Մարզում կան

- կամուրջ և կամրջային անցում 175 հատ
- ավտոմոբիլային թունել 5 հատ

Մարզով անցնող միջպետական նշանակության ավտոճանապարհները կազմում են Հայաստանի Հանրապետության միջպետական ավտոճանապարհային ցանցի 12.4 %-ը: Ներկայումս ընթացքի մեջ են Մ-6՝ Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի վերականգնման և բարելավման ծրագրի 2-րդ փուլով նախատեսված աշխատանքները (ավարտը նախատեսված է 2020թ վերջին):

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և Լոռու մարզպետարանի կողմից ՀՀ պետական բյուջեի և այլ վարկային միջոցներով 2019 թվականին ՀՀ Լոռու մարզում պլանավորվել է իրականացնել **13.978 մլրդ դրամի** աշխատանք:

1. Պետբյուջեի սեփական միջոցներով իրականացվելու են 3619.7մլն դրամի աշխատանքներ, այդ թվում՝

- Մ-3, Թուրքիայի սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման կմ 107+900-կմ 109+000 հատվածի հիմնանորոգում,
- Մ-3, Թուրքիայի սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման կմ112+900-կմ116+900 հատվածի հիմնանորոգում,
- Մ-8, Վանաձոր (Մ-6 հատման կետ)-Դիլիջան կմ13+500-կմ22+400 հատվածի հիմնանորոգում
- Մ-8, Վանաձոր (Մ-6 հատման կետ)-Դիլիջան կմ22+400-կմ33+500 հատվածի հիմնանորոգում,
- Մարզային նշանակության ա/ճանապարհների պահպանում և շահագործում:

2. Պետական վարկային միջոցներով՝

ՀՀ Լոռու մարզի 2019 թվականի գործունեության ծրագիր

- Մ6՝ Վանաձոր- Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ38+450 - կմ90+191 հատվածի վերականգնման և բարելավման աշխատանքներ՝ 8 724.1 մլն դրամ
- Մ7-Մեծ Պարնի-Ծաղկաբեր կմ 0+000 - կմ 6+240 ճանապարհային հատվածի վերանորոգում՝ 770.0 մլն դրամ
- Դեպի «Սոճուտ» դենդրոպարկ տանող ճանապարհի վերակառուցում՝ 182.323.0 մլն դրամ

Մարզում 12 համայնքների ներհամայնքային ճանապարհների վերանորոգման աշխատանքներ կիրականացվեն նաեւ համայնքներին տրամադրվող այլ սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում: Այդ ծրագրերի ցանկը կհստակեցվի մինչեւ ս.թ. մայիս ամիսը:

Ուղևորահոսքի սակավության պատճառով մարզի հինգ փոքր համայնքներից կանոնավոր ուղևորափոխադրումներ չեն իրականացվում: Այդ համայնքներից ուղևորափոխադրումներն իրականացվում են սեփական և տաքսի ծառայության ավտոմեքենաներով:

Համաձայն Հայաստանի Հանրապետությունում միասնական երթուղային ցանցի ստեղծման տեխնիկական առաջադրանքի՝ նախատեսվում է մարզի խոշոր քաղաքներից կամ մարզկենտրոնից դեպի Երևան, կամ այլ մարզի խոշոր քաղաքներ և դրա հետ միասին տվյալ խոշոր քաղաքը կամ մարզկենտրոնը իրեն հարող բոլոր բնակավայրերին կապող երթուղիների սպասարկման համար հայտարարել մրցույթներ մեկ փաթեթով: Արդյունքում հնարավոր կլինի ընտրել մեկ փոխադրող, որը կսպասարկի մարզի ինչպես շահութաբեր, այնպես էլ ոչ շահութաբեր երթուղիները ամբողջովին:

6.2 Խմելու ջրամատակարարում և ջրահեռացում

Մարզի բնակչությանը կայուն, մատչելի և որակյալ խմելու ջրամատակարարման բարելավումը ոլորտի զարգացման նպատակներից է: Մարզի համայնքների շուրջ 65-70%-ում գործում է շուրջօրյա ջրամատակարարում:

ՄԶՌ-ի ոլորտի հիմնախնդիր է հանդիսանում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի մաշվածությունը: Ջրամատակարարման խնդիր ունի մարզի բնակչության 2.1%-ը, իսկ ջրահեռացման խնդիր ունեցող՝ բազմաբնակարան շենքերում ապրող բնակիչները կազմում են մարզի բնակչության 3.0%-ը:

«ՀՀ Լոռու մարզում Հայ-Գերմանական համագործակցության ծրագրի շրջանակներում KFW բանկի ֆինանսավորմամբ նախատեսված են՝ Վանաձորի 8-րդ ճնշումային գոտու բաշխիչ ցանցի վերակառուցման, իսկ Ամրակից, Անտառամուտ, Ձորագյուղ, Գուգարք, Հոբարձի, Վարդաբլուր, Կուրթան, Լեռնապատ, Վահագնի համայնքներում բաշխիչ ցանցերի, ՕԿՋ-ների և 3 գետային ջրընդունիչների վերակառուցման աշխատանքները:

«ՀՀ Լոռու մարզի 2019 թվականի գործունեության ծրագիր»

2019թ.-ին նախատեսված է իրականացնելու շուրջ **4555,2մլն դրամի** ջրամատակարարման և ջրահեռացման բարելավման աշխատանքներ, այդ թվում ՀՀ պետական բյուջեով կիրականացվի խմելու և ոռոգման ջրագծերի, ՕԿՋ-ների, կապտաժների վերանորոգման և կառուցման 162,210 մլն ՀՀ դրամի աշխատանքներ:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ ՊԿԱԾ ծրագրի շրջանակներում 2019թ. նախատեսված են Չախկալի աղբյուրներից սկիզբ առնող և Ջրաշեն համայնքի ՕԿՋ-ների սան. գոտիով անցնող, Ջրաշեն համայնքը և Սպիտակ քաղաքը սնող ջրատարի վարակազերծման համար սան. գոտում գոյություն ունեցող քլորակայանի շենքի վերանորոգման աշխատանքներ:

Գյուլիգարի աղբյուրներից սնվող և Ստեփանավան քաղաքը սնող ջրագծի վարակազերծման համար ՕԿՋ-ների սան. գոտում գոյություն ունեցող քլորակայանի շենքի մասնակի վերանորոգման ե քլորացման սարքավորումների մոնտաժման աշխատանքներ:

Խմելու ջրահամակարգերի, ներքին ցանցերի վերանորոգման ջրահեռացման ուղղությամբ աշխատանքներ կիրականացվեն նաեւ մարզի 6 համայնքներում պետական աջակցության այլ սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում:

6.3 Գազամատակարարում (գազիֆիկացում)

Լոռու մարզն ունի 56 համայնք, որից 7 քաղաքային բնակավայր ունեցող եւ 49 բացառապես գյուղական բնակավայրերից կազմված համայնքներ, որոնք բաշխված են 5 տարածաշրջանների մեջ: 01.01.2019թ. դրությամբ մարզում առկա է գազաֆիկացված 50(89.3%) եւ չգազաֆիկացված 6(10.7%) համայնք: Գազաֆիկացված չէ նաև 29 բնակավայր:

Ըստ 2017թ.-ի ՄՁՌ-ի ՀՀ Լոռու մարզի 107 համայնքներից գազաֆիկացված էր 83 համայնք (77.6%), որտեղ բնակվում էին մարզի բնակչության շուրջ 97.0%: Անհրաժեշտ է լուծել թվով 24 համայնքների (22.4%) գազաֆիկացման խնդիրը, որտեղ բնակվում է մարզի բնակչության շուրջ 3.0%:

2019թ.-ին ոլորտում նախատեսվում են Կ.Աղեգի, Գուգարք, Փամբակ, Վարդաբլուր, Գարգառ, Ագարակ, Միխայլովկա, Ուռուտ համայնքները սնող միջին և ցածր ճնշման գազատարերի վթարային հատվածների և մեկուսիչ շերտի նորոգման, Դիլիջան-Վանաձոր մայրուղային գազատարի վերականգնման, բնական գազի կենցաղային հաշվիչների, պաշտպանիչ արկղերի, վթարային անջատիչ կափույրների ու ազդանշանային սարքերի տեղադրման աշխատանքներ և ԳԿԿ շենքի կապիտալ նորոգում: Ինչպես նաև Սպիտակ, Գյուլագարակ, Սարչապետ և Ջրաշեն համայնքների բյուջեների միջոցների հաշվին նախատեսվում են գազաֆիկացման աշխատանքներ:

2019թ.-ին գազամատակարարման ոլորտում նախատեսվում է իրականացնել **334.3մլն դրամի** աշխատանքներ:

ՀՀ Լոռու մարզի 2019 թվականի գործունեության ծրագիր

6.4 Էներգետիկա

Մարզի բոլոր բնակավայրերը միացված են էլեկտրական ցանցերին և ապահովված են հիմնականում անխափան և առանց լուրջ վթարների էլեկտրամատակարարմամբ:

2019թ.-ին մարզում նախատեսված է ներդրումների ծավալը **3058.7 մլն. դրամ**: Այդ թվում՝

- Վերակառուցման և զարգացման միջազգային (ՎՀՄԲ) բանկի աջակցությամբ կիրականացվեն «Վանաձոր-1» 110/10/6 կՎ ենթակայանի վերակառուցման և «Լավվար-Նոյեմբերյան» 110 կՎ օդային գծերի վերակառուցման աշխատանքներ:
 - Պետբյուջեի ֆինանսավորմամբ կիրականացվեն «Հյուսիսային» մասնաճյուղի «Վանաձոր-1» ենթակայանի ԲԼՕԳ-ի ծառայության արտաքին պատերի, քաղաքացիական պաշտպանության ապաստարանի տանիքի և կենտրոնական պահեստի հիմնապատի նորոգման ու ցինկապատ թիթեղով պատերի փոխարինման, «Վանաձոր-2» ենթակայանի ԱՏ-1 յուղահավաք համակարգի նորոգման և «Լոռի-1» հողմակայանի ընթացիկ նորոգման ու վնասված սարքերի փոխարինման աշխատանքներ:
 - «ՀԷՑ» ՓԲԸ-ի ներդրումային ծրագրով կիրականացվեն «Մարց» 35/10 ենթակայանից սնվող «Լորուտ» 10կՎ օդային գծի-ի 5կմ հատվածի վերակառուցման աշխատանքներ:
 - Համայնային բյուջեների հաշվին մարզի թվով 18 համայնքներում փողոցային լուսավորության համակարգի կառուցման աշխատանքներ:
- Նախատեսվում է նաեւ 2019թ. համայնքներին սուբվենցիաների տրամադրման շրջանակներում մարզի 12 համայնքների կիրականացնեն լուսավորության անցկացման ծրագրեր:

7.ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Մարզի քաղաքաշինության ոլորտի հիմնախնդիրները կապված են բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման, հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքերի սեյսմակայունության բարձրացման և վերանորոգման, առողջապահական օբյեկտների կառուցման և վերանորոգման, մշակութային, նախադպրոցական, մարզական օբյեկտների, բազմաբնակարան շենքերի հիմնանորոգման, 3-րդ աստիճանի վթարայնություն ունեցող բազմաբնակարան բնակելի շենքերի ամրացման, բազմաբնակարան շենքերի վնասվածության աստիճանի որոշման նպատակով հետազննումների անցկացման, բնակավայրերի բարեկարգման, բազմաբնակարան շենքերի կառավարման գործին պետական աջակցության, քաղաքաշինության ոլորտի գործընթացի հստակեցման, իրավասու մարմինների վարչարարության, թույլտվությունների, եզրակացությունների տրամադրման պարզեցման, ինչպես նաև քաղաքաշինական այլ խնդիրների հետ:

«Հ Լոռու մարզի 2019 թվականի գործունեության ծրագիր»

Մարզում հիմնախնդիր է մնացել աղետի գոտու գյուղական բնակավայրերում անօթևան մնացած 345 ընտանիքի բնակարանով ապահովման հարցը:

Քաղաքաշինության ոլորտի զարգացման նպատակներն են 3-րդ աստիճանի վթարայնություն ունեցող բազմաբնակարան բնակելի շենքերի ամրացումը, բազմաբնակարան բնակարանային ֆոնդի վերականգնումը, բակերի բարեկարգումը, կոմունալ ենթակառուցվածքների վերանորոգումը, միավորված համայնքների համակցված գլխավոր հատակագծերի և շինարարական օբյեկտների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմումը:

Համաձայն ՀՀ կառավարության 12.04.2018թ. 424-Ն որոշման «Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովում» ծրագրով բարձր պատրաստակամություն ունեցող 44 կիսակառույց բնակելի տների շինարարական աշխատանքները ավարտելու համար «Ֆուլեր տնաշինական կենտրոն» հասարակական բարեգործական կազմակերպության հետ կնքվել է պայմանագիր՝ 458.118մլն դրամ արժեքով: Շինարարական աշխատանքները կսկսվեն 2019թ.-ի մարտի 1-ին և կավարտվեն 2019թ.-ի դեկտեմբերի 1-ին: Ինչ վերաբերում է 2019 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսված ծրագրին (560.0մլն դրամ ընդհանուր արժեքով)՝ մինչ օրս հայտնի չեն Լոռու մարզի մասնաբաժինը և ծրագրի իրականացման ձևն ու ժամկատները: Դրանք կհստակեցվեն կառավարության առանձին որոշմամբ:

Քաղաքաշինության բնագավառում նախատեսվող ներդրումների ավալը կազմում է **3619.4մլն դրամ:**

8.ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

8.1 Տարածքային կառավարում

ՀՀ պետական բյուջեից մարզպետարանի ապարատի պահպանման ծախսերի և ենթակա կրթական և մշակութային ՊՈԱԿ-ներին հատկացված գումարների վերաբերյալ /2018-2019թթ./

	2018թ. փաստացի	2019թ. նախատեսված	2019թ.-ին 2018թ.-ի նկատմամբ /հազ. դրամ/	2019թ.-ին 2018թ.-ի նկատմամբ /%-ով/
ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի պահպանում	571906.6	670430.1	98523.9	117.2

ՀՀ Լոռու մարզի 2019 թվականի գործունեության ծրագիր

Պետական ոչ առևտրային կազմակերպությունների հատկացված գումար, որից՝	6788387.1	6984602.5	196215.4	102.9
ա/ Կրթական ոլորտի	6773285.8	6966480.9	193195.1	102.8
բ/ Մշակութային ոլորտի	15101.3	18121.6	3020.3	120.0

Մարզպետարանի ապարատի պահպանման ծախսերը 2018 թվականին փաստացի կազմել է 571906.6 հազ. դրամ: 2019 թվականին նախատեսված է 670430.1 հազ. դրամ, կամ ավելացել է 98523.9 հազ. դրամով /աճ՝ 17.2%-ով/, որը հիմնականում պայմանավորված է աշխատավարձերի բնականոն աճով և <<Պարզևատրույններ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ>> հոդվածով գումարների նախատեսմամբ: Վերը նշված հոդվածով նախատեսվել է 93190.5 հազ. դրամ պարզևատրման ֆոնդ:

Լոռու մարզպետարանի աշխատակազմում <<Mulberry-2>> համակարգի ներդրման աշխատանքների արդյունքում նախատեսվում է ձեռք բերել 9 համակարգիչ՝ մարզպետարանի միջոցների հաշվին, ևս 6 համակարգիչ և 1 սկաներ ձեռք կբերվի աջակցության դեպքում:

Կրթության ոլորտի պետական ոչ առևտրային կազմակերպություններին հատկացված փաստացի գումար 2018թ.-ին կազմել է 6773285.8 հազ. դրամ: 2019թ.-ի համար նախատեսված է 6966480.9 հազ. դրամ, կամ աճել է 193195.1 հազ. դրամով/աճը՝ 2.8%/:

Մշակութային ոլորտի պետական ոչ առևտրային կազմակերպության /Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարան/ պահպանման ծախսերը 2018թ.-ին փաստացի կազմել է 15101.3 հազ. դրամ, 2019 թվականին նախատեսված է 18121.6 հազ. դրամ, կամ աճել է 3020.3 հազ. դրամով/ 20.0 տոկոս/:

Մարզում 2019թ. տարածքային կառավարման ոլորտում նախատեսվում է ապահովել հետևյալ արդյունքները.

- օրենսդրությամբ մարզպետին վերապահված լիազորությունների արդյունավետ իրականացում,
- մարզպետարանի աշխատակազմի օպտիմալացում և կառուցվածքային փոփոխության իրականացում,
- մարզպետարանի աշխատակազմի աշխատատեղերի կահավորում և տեխնիկական հագեցում,
- համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից սուբվենցիաների տրամադրման գործընթացի շարունակում,
- մարզպետարանի տեղեկատվական, կառուցվածքային կառավարչական

<< Լոռու մարզի 2019 թվականի գործունեության ծրագիր

գործառույթների բարելավում,

- մարզպետարանի աշխատակազմի, ՏԻՄ-երի և ՀԳՄ տարածքային ստորաբաժանումների փոխհարաբերությունների սերտացում,
- մարզպետարանի քաղաքացիական ծառայողների վերապատրաստումների շարունակում,
- մարզպետի կողմից իրականացնել իրավական և մասնագիտական վերահսկողություն տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող լիազորությունների իրականացման նկատմամբ,
- մարզպետարանի և համայնքապետարանների մասնագետների, մարզային ռազմավարության իրականացման սուբյեկտների շարունակական մասնագիտական վերապատրաստումների իրականացում,
- մարզում չօգտագործվող պետական և համայնքային գույքի հաշվառումը, ըստ պիտանելիության աստիճանի դասակարգումը և իրականացվելիք ծրագրերի համար որպես արտադրական և գրասենյակային տարածքներ օգտագործելու համար սեփականատերերի հետ քննարկումների կազմակերպումը,
- մարզպետարանի աջակցությամբ կամ ուղղակի գործողություններով մարզում կատարված ներդրումների ծավալի ավելացումը,
- մարզպետարանի և ՏԻՄ-երի, մասնավոր հատվածի միջև համագործակցության մակարդակի բարձրացումը:

8.2 Տեղական ինքնակառավարում

2018թ. ՀՀ Լոռու մարզի համայնքներում 1 շնչին ընկնող սեփական եկամուտները (221.1հազ. մարդ) փաստացի կազմել է 10.4հազ. դրամ, 10.5հազ. դրամ դրամ պլանավորվածի դիմաց, 2019թ. համար նախատեսվել է 11.4հազ. դրամ կամ մարզում բնակչության 1 շնչի հաշվով սեփական եկամուտները 2018թ.ին պլանավորվում է ավելացնել 9.6%-ով:

Լոռու մարզի համայնքների սեփական եկամուտները 2018թ. Համար տարեսկզբին նախատեսվել էր 6,888,079.8հազ. դրամ (տարեվերջին՝ 7,219,300.1հազ. դրամ), փաստացի կատարումը կազմել է 7,172,292.2հազ. դրամ, իսկ 2019թ. համար նախատեսվել է 7,283,137.7հազ. դրամ, որի աճը 2018թ. պլանի նկատմամբ նախատեսվել է 5.7% աճ, իսկ 2018թ. փաստացիի նկատմամբ 1.5% աճ և ընդհամենը եկամուտների մեջ սեփական եկամուտների տեսակարար կշիռը նախատեսվել է 31.9%:

2019թ. տեղական ինքնակառավարման ոլորտի առաջնահերթություններ են.

- վարչատարածքային բարեփոխումների շարունակումը,

ՀՀ Լոռու մարզի 2019 թվականի գործունեության ծրագիր

- տեղական ինքնակառավարման մարմինների, համայնքապետարանների աշխատակազմերի տեխնիկական և մասնագիտական հմտությունների զարգացումը,
- համայնքների զարգացման ծրագրերի մարզային զարգացման ռազմավարությանը համապատասխանեցման շարունակումը.
- տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների որակից բնակչության բավարարվածության աստիճանի բարձրացումը,
- համայնքների բյուջեների սեփական եկամուտների աճի ապահովումը նախորդ տարվա համեմատ,
- համայնքապետարանների աշխատակազմերի գործունեության արդյունավետության բարձրացում, մատուցվող ծառայությունների որակի բարելավումը,
- համայնքների զարգացման գործընթացներում քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովումը,
- աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների որակի բարելավումը և հասանելիության ապահովումը:

8.3 Քաղաքացիական հասարակություն

2019 թվականի ընթացքում տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկության և հրապարակայնության ապահովելու նպատակով մարզպետարանի աշխատակազմի, ՏԻՄ-երի, ՋԼՄ-ների և մարզի հասարակական կազմակերպությունների համագործակցությամբ նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- մարզում գործող ՋԼՄ-ների և հասարակական կազմակերպությունների հետ անհրաժեշտ համագործակցության կազմակերպում՝ հանրային իրազեկման աշխատանքներն առավել արդյունավետ դարձնելու նկատառումներով,
- պարբերաբար կազմակերպել հանրային քննարկումներ՝ հանրային կարևորություն ներկայացնող հարցերի առնչությամբ,
- ապահովել մարզպետի, մարզի համայնքների ղեկավարների, ավագանու անդամների կողմից հանրությանը ներկայացվող հաշվետվությունների, ինչպես նաև մարզի տարեկան գործունեության ծրագրով նախատեսված միջոցառումների իրագործման վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը,
- ապահովել մասնակցային կառավարումը և հասարակական կազմակերպություններին, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին և բնակիչներին մասնակից դարձնել որոշումների ընդունմանը և բարձրացնել հանրության իրազեկվածության աստիճանը,
- շարունակել մարզպետարանի և համայնքների պաշտոնական ինտերնետային կայքերի հնարավորությունների կատարելագործման ուղղությամբ տարվող աշխատանքները,
- մարզպետի, նրա տեղակալների և մարզպետարանի կառուցվածքային

« Lոռու մարզի 2019 թվականի գործունեության ծրագիր

ստորաբաժանումների ղեկավարների՝ համայնքներ կատարվող այցելությունների լուսաբանման աշխատանքների շարունակական կազմակերպում:

8.4 Արտակարգ իրավիճակների բնակչության և տարածքների պաշտպանություն

Բնական և տեխնածին աղետների ժամանակ բնակչության պաշտպանվածության խնդիրը պետք է մշտապես գտնվի պատասխանատու մարմինների ուշադրության կենտրոնում: Ռիսկերի նվազեցման գործընթացում գլխավոր պայմանը հասարակության պատրաստվածությունն է բնական և տեխնածին աղետներին: Այս գործընթացում կարևորվում է աղետների վերաբերյալ տեղեկատվական, վերլուծական, ինչպես նաև ազդարարման, իրազեկման աշխատանքների կազմակերպումը:

Լոռու մարզը՝ աղետների առումով, գտնվում է բարձր ռիսկային գոտում, որը լուրջ սպառնալիք է ազգաբնակչության, մարզի և համայնքների կայուն զարգացման համար: Աղետների ռիսկի կառավարման (ԱՌԿ) կարողությունների զարգացումը կարևոր նախադրյալ է համայնքի անվտանգ լինելու համար:

ԱՌԿ համակարգը գործընթացների և գործառույթների մի շրջանակ է, որի նպատակն է բարձրացնել աղետներին դիմակայելու կարողությունները: Այն նպատակաուղղված է կանխելու կամ կանխարգելելու վտանգները, նվազեցնելու այդ վտանգների հնարավոր բացասական ազդեցությունը, ինչպես նաև նպաստելու, մարզի, համայնքների և հասարակության կայուն զարգացմանը:

Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ոլորտում 2019 թվականի հիմնական միջոցառումներն են՝

1) Աղետների ռիսկի կառավարման պլանից բխող ծրագրերի մշակում, այդ թվում նաև նոր կազմվող զարգացման ծրագրերում աղետների ռիսկերի նվազեցման բաղադրիչների ներառում:

2) Բնակավայրերում ազդարարման սարքավորումների ձեռք բերման և վերանորոգման ուղղությամբ աշխատանքների իրականացում:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների պատրաստվածության բարձրացման նպատակով 2019 թվականին անց են կացվելու ուսումնավարժություններ՝

- 1) Մեկ շտաբային ուսումնավարժություն.
- 2) Մարզի 30 համայնքների կողմից շտաբային ուսումնավարժությունների անցկացում.
- 3) Մեկ ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության անցկացում.

4) Հատուկ տակտիկական ուսումնավարժության անցկացում մարզի 8 կազմակերպություններում և 6 հանրակրթական դպրոցներում, 8 հանրակրթական դպրոհներում դասախոսությունների անցկացում.

5) Մարզի 2 կազմակերպություններում օբյեկտային վարժանքների անցկացում:

Մյուս հիմնախնդիրը գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելումն է, որի նպատակով մարզի տարածքում պետք է կատարվեն գետերի հունների, հեղեղատարների մաքրման և ավապաշտպան կառույցների վերանորոգման աշխատանքներ:

2019թ. նախատեսվում է համայնքների բյուջեների միջոցներով իրականացնել հեղեղատարների մաքրման և նորոգման աշխատանքներ:

9. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

Լոռու մարզի 2019 գործունեության ծրագրի համար կարևորվում է մշտադիտարկումը, որը կիրականացվի մարզային վարչակազմի կողմից՝ մոնիտորինգի և գնահատման (ՄԳ) համակարգի միջոցով: ՄԳ համակարգը կվերահսկի Ծրագրի կատարումը, կամփոփի 2019 թվականի գործունեության արդյունքները՝ ՄՁՌ նպատակներին հասնելու առումով:

Մոնիտորինգի տարեկան հաշվետվությունը կամփոփի տարվա ընթացքում նախատեսված բոլոր միջոցառումների վերաբերյալ ՄԳ համակարգից ստացված արդյունքները: Այն կներառի հետևյալ գլխավոր բաժինները.

1. տարեկան ծրագրի շրջանակներում իրականացված միջոցառումները, կատարված ծախսերը և արդյունքները,
2. հաջորդ տարվա հիմնախնդիրները, այդ թվում՝ քաղաքականությունների ուրվագծումը:

ՄԳ տարեկան հաշվետվությունը պատրաստելուց հետո կկազմակերպվի ՄԳ արդյունքներն ամփոփող խորհրդակցություն, որին կմասնակցեն ինչպես մարզի խորհրդի, այնպես էլ քաղաքացիական հասարակության և դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչները:

10. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Լոռու մարզի 2019թ.-ի գործունեության ծրագրի ընդհանուր ֆինանսավորումը կազմում է 57.683մլրդ. դրամ, որից

	ԸՆԴԱՄԵՆԸ՝ 2019թ.	60,087,655.2
	<i>որից՝</i>	
1	ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝	39,460,657.7

ՀՀ Լոռու մարզի 2019 թվականի գործունեության ծրագիր

	<i>սեփական միջոցներ</i>	<i>27,083,105.2</i>
	<i>վարկային միջոցներ</i>	<i>12,377,552.5</i>
2	Միջազգային կազմակերպություններ և դոնորներ	4,683,952.6
3	Համայնքային բյուջե	1,183,312.4
4	Մասնավոր ներդրողներ	13,959,732.5
5	Այլ աղբյուրներ	800,000.0